




## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՊԻՏՈՒԼԵԱՆՏ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵԼ ԵՆ ԹՇՆԱՄՈՒՆ ՅԱՆՁՆԵԼ ՉՈՐՍ ԳԻՐ



### Սպահանում եւ Թաւրիզում ակտիւացել է ՅՕՊ համակարգը

«ԱԼԻՔ» - Ապրիլի 19-ի վաղ առաւօտեան, պայթիւնի ձայներ են լսել Սպահանում եւ Թաւրիզում, որոնք հակաօդային պաշտպանութեան համակարգի (ՅՕՊ) աշխատանքի հետեւանք է եղել:

Սպահանում, ՅՕՊ համակարգի աշխատանքի արդիւնքում, երեք կառուցուածքներ են փաստագրուել որոնք փորձել են հարածել Բրանի ռազմաօդային ուժերի Սպահանի աւիաբազային: Աւիաբազան չի փաստել: Յարձակումն ըստ երեւոյթի, իրա-

կանացել է սիւնիստական ռեժիմի կողմից, որը պաշտօնական մակարդակով չի ստանձնել դրա պատասխանատւութիւնը: Գործողութեան մասշտապը շատ փոքր է եղել, իսկ հետեւանքները՝ զրոյական:

Սիւնիստական ռեժիմի կառավարութեան անդամներից գործողութեան արձագանգել է միայն Ներքին անվտանգութեան նախարար Բէն Գոյլը, որը X-ի իր միկրոթրոնում գրել է մէկ բառ՝ «Անօգուտ»:

«ԱԼԻՔ» - Ապրիլի 19-ին Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետութեան եւ Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ պետական սահմանի սահմանագատման եւ սահմանային անվտանգութեան հարցերով յանձնաժողովի եւ Ադրբեջանի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ պետական սահմանի սահմանագատման պետական հանձնաժողովի ութերորդ հանդիպումը՝ ՀՀ փոխվարչապետ Միւր Գրիգորեանի եւ ԱՀ փոխվարչապետ Շահին Մուստաֆայեի նախագահութեամբ:

Հանդիպման արդիւնքում ՀՀ կապիտուլեանտ իշխանութիւնները համաձայնել են փաստացի թշնամուն յանձնել չորս գիւղ՝ չստանալով ոչինչ: Լրագրողական հարցմանը, թէ պայմանաւորութեան արդիւնքում ի՞նչ է ստանում Ադրբեջանը, իսկ ի՞նչ՝ Հայաստանը, ՀՀ վարչապետի աշխատակա-

մից պատասխանել են, թէ իբր Հայաստանն առաջին անգամ ունենալու է սահմանագատած սահման Ադրբեջանի հետ:

«Առաջին անգամ ունենում ենք սահմանագատած սահման Ադրբեջանի հետ, ինչը կարելի է որակել որպէս նշանակալի իրադարձութիւն: Հայաստանի Հանրապետութիւնը նաեւ ստանում է գործուն հարթակ եւ հնարաւորութիւն սահմանագատման գործընթացը կազմակերպել քաղաքակիրթ եւ լեզիտիմ ընթացքով՝ եւ իրականացնել այն՝ ապահովելով բնակչութեան անվտանգային, սոցիալ-կենցաղային եւ իրաւական անհրաժեշտ երաշխիքները»,- ասած է ՀՀ վարչապետի աշխատակազմի պատասխանում:

Փաստօրէն՝ ՀՀ գործող իշխանութիւնները թշնամուն յանձնում են չորս գիւղ, ստանալով՝ ոչինչ:

Համարելով այս մասին հրապարկւած պաշտօնական յայտարարութեան

բովանդակութիւնը, լրագրողական եւ փորձագիտական շրջանակների կողմից ընդգծւած փաստերը, կարող ենք արձանագրել:

1.ՀՀ-ն թշնամուն է յանձնում ՀՀ ՁՈՒ վերահսկողութեան տակ գտնուող հատուածները,

2.Ոսկեպար եւ Բերքաբեր գիւղերի յարակից տարածքների ճակատագիրը մտում է «օրում»,

3.Կիրանց գիւղը փաստօրէն գրկում է ճանապարհի մի հատուածից,

4.Բերքաբերի հողերը մտում են Ադրբեջանի վերահսկողութեան տակ:

Կարձ ասած՝

-Ադրբեջանը ստանում է հողեր ու շրջանցում է ՀՀ ՁՈՒ պաշտպանական գիծը, իսկ Հայաստանը ստանում է իբր «սահմանագատման հետ կապւած եւ անվտանգային ռիսկերի նաւագեցում»:

Փաստացի՝ ոչ մի բան:

### Ամիր Աբդոլլահեան.

### «Անհրաժեշտ է ճնշում գործադրել Իսրայէլի վրայ՝ Իրանի նկատմամբ արկածախնդրութիւնը կանխելու համար»

«ԱԼԻՔ» - ՄԱԿ-ի ԱԽ-ում ունեցած ելոյթում, Իրանի ԱԳ նախարար Հոսէյն Ամիր Աբդոլլահեանն ասել է. «Իսրայէլի վրայ պէտք է ճնշում գործադրել Իրանի դէմ ռազմական գործողութեան կրկնութիւնը կանխելու համար»:

Նա նշել է. «Իրանի դէմ Իսրայէլի ռեժիմի կողմից ուժի կիրառման եւ ագրեսիայի դէպքում, Թեհրանը կը տայ կոշտ պատասխան եւ ռեժիմին կը ստիպի ափսոսալ իր գործողութիւնների համար»:

Ամիր Աբդոլլահեանն ասել է. «Ապրիլի 1-ին Դանասկրում Իրանի հիպատոսարանի վրայ Իսրայէլի յարձակումը ցոյց տւեց, որ ռեժիմը չի վարանում խախտել անգամ դիւանագիտական անձանց եւ վայրերի անձեռնմխելիութեան մասին Վիեննայի կոնուենցիան»:

Parstoday-ի համաձայն, քննադատելով Իսրայէլի յարձակման նկատմամբ ՄԱԿ-ի եւ ԱԽ-ի անգործութիւնն Ամիր Աբդոլլահեանը յանդէս է տր



ԱՄՆ-ի, Բրիտանիայի եւ Ֆրանսիայի անպատասխանատու քայլերի պատճառով, Անվտանգութեան խորհուրդը չկարողացաւ այս անօրինական յարձակումը դատաւարտող յայտարարութիւն ընդունել:

Նշելով, որ Իրանը միշտ դրական դերակատարութիւն է ունեցել տարածաշրջանային զարգացումներում, այդ թումը՝ կայուն խաղաղութեան եւ անվտանգութեան հաստատման հարցում, ինչպէս նաեւ ահաբեկչութեան դէմ պայքարում, Աբդոլլահեանը յանդէս է տր «Պահապանների կորպուսը» (Շար. 8-րդ էջում)



### Դեսպան Սոքիանի.

### «Ղարաբաղի բնակիչների իրաւունքներն անպայման պետք է հաշվի առնել»

«ԱԼԻՔ» - Անվտանգութեան ներկայիս փխրուտութիւնը եւ սպառնալից իրադարձութիւնը բխում է տարածաշրջանում ուժերի անհասարակչութիւնից: Խորապէս համոզւած ենք, որ Հարաւային Կովկասում ուժերի հասարակչութիւն պետք է հաստատուի: Այս մասին ըստ Հայաստանեան ՁԱՄ-ների՝

ապրիլի 19-ին Ռոտտանի միջազգային փորձագիտական ֆորումի ժամանակ յայտարարել է Հայաստանում Բրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհրի Սոքիանի:

Դեսպանը յանդէս է տր Հարաւային Կովկասի աշխարհի ռազմավարական (Շար. 8-րդ էջում)

### Հայ ժողովրդի պահանջատիրական ոգով տոգորւած՝ Արթուր Մանուկեանի ստեղծագործութիւնների ցուցահանդէսը «Արարատ» մարզալանում

«ԱԼԻՔ», Գ. Դ. - Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցի մեծարման ծրագրերի շարանում, Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան «Արեւստից միութեան նախաձեռնութեամբ, թւականիս ապրիլի 18-ին «Արարատ» մարզալանի «Թաժակ Արդունանեան» ցուցասրահում բացումը (Շար. 8-րդ էջում)



ՎԵՐՆԵՐՆԵՐԻ ՄԻՄԻՊՐՈՒՄ

«...Ու պայքար՛ր, պայքար՛ր, պայքար՛ր երգեցի.

- Ձեզի ընծա՛յ, հայ մարտիկներ-

Գրիչս եղաւ անթրոց սրբուերու հնոցի...

- Ձեզի ընծա՛յ, քաջ մարտիկներ

- Եղեզնէայ գրըչով վրրէժ երգեցի.

Ընդ եղեզան փող բո՛ց ելաներ...



Դանիէլ Վարուժան (1884-1915), Արեւմտահայ մեծանուն բանաստեղծ, հայկական պոեզիայի ամենասնհաս գագաթներից մէկը  
Ապրիլի 20-ը Դանիէլ Վարուժանի ծննդեան օրն է: Այսօր նա դարձաւ 140 տարեկան:

ARAM®  
c o f f e e  
ԱՐԱՄ  
قهوه آرام  
فروشگاه مرکزی:  
قائم مقام فراهاهی-شماره ۶۳  
88303478 ԵՎ 88308730  
www.aramcoffee.com  
instagram:aram\_coffee



ՕՐԻԱՅ ԹԵՄԱ. ՏԱՌՈՒՅ

Վարդան Ոսկանեան.

«Ադրբեջանական լրատվամիջոցները գրում են, թե կրկին առանց կրակոցի՝ Ալիևը տարածքներ ստացաւ»

Ադրբեջանական մեդիաընկերակազմը մեծ ոգեւորութեամբ անդրադարձան է Հայաստանի կողմից տարածքային հերթական զիջումներին: Մասնաւորապէս, գրում են, թե կրկին առանց կրակոցի՝ Ալիևը տարածքներ ստացաւ:

Յաւայի փաստին անդրադարձել է ԵՊՀ Արեւելագիտութեան ֆակուլտետի Իրանագիտութեան ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանեանը:

«Բարի բարբարոսական վարչախումբը ցնծում է իր համար էլ անսպասելի յաջողութիւնների շղթայից»:

Ուշագրաւ է, որ նոյնիսկ այդ վարչախումբի հիմնական քարոզամիջոցներից մէկի հակահայ խմբագիրը չի հաւատում, թե ինչ հեշտութեամբ է Բարի բարբարոսները տիրանում արհեստաձին Ադրբեջանի համար ամենավարդագոյն երազում իսկ անհասանելի տարածքների:

Սա մեր համագային ամօթի եւ նաստացման դարաշրջանն է, որը բերելու է լրջագոյն նոր մարտահրաւերներ մեր պետութեան անվտանգութեան եւ կենսունակութեան համար»,- գրել է նա:



Վարուժան Գեղամեան.

«Ադրբեջանը փաստացի ստիպել է, որ մեր բանակը այլեւս չպահի սահմանը, այլ միայն սահմանապահները: Այս մասին տեղեկատվւման իր ալիքում գրել է թուրքագետ Վարուժան Գեղամեանը:



Ադրբեջանը փաստացի ստիպել է, որ մեր բանակը այլեւս չպահի սահմանը, այլ միայն սահմանապահները: Այս մասին տեղեկատվւման իր ալիքում գրել է թուրքագետ Վարուժան Գեղամեանը:

«Սա շատ վատ է, որովհետո ի տարբերութիւն մեր սահմանապահ ուժերի՝ Ադրբեջանի սահմանապահ զորքերը ըստ էության բանակա-

յին լիարժէք մարտական ստորաբաժանում է, ոչ թէ ուղղակի պահուորդ:

«Համաձայնել են, որ կողմերը կը դիմեն իրենց կառավարութիւններին՝ սահմանագծի համաձայնեցում հաստատելու իրենց սահմանապահ ծառայութիւնների միաժամանակեայ եւ զուգահեռ տեղակայման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով»,- նշել է նա:

Համախմբել է պետք, չարիքի իշխանութիւնը պետք է հեռանայ



«ԱԼԻԲ» - Տաւուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ արք. Գալստեանը Yerkir.am-ի հետ զրոյցում պատասխանել է հարցին, թե ինչ գնահատական կը տայ, Փաշինեանը օրեր առաջ տատուջիների գլխի տակ փափուկ բարձ էր դնում, սակայն անսպասելի յանձնեց գիւղերը:

ենք պատասխանել այդ նետուած մարտահրաւերին: Թե ինչ կը լինի սպաւապում, ուղղակիորէն կը երեւայ»,- ասաց Սրբազանը՝ դիմելով քաղաքացիներին:

«Ես մի բան էլ եմ խնդրում, համացանցում անհատ օգտատէրերը, խմբերը եւ այլն, յայտարարութիւնները տարածելիս, այս մասին խօսելիս նախ զգուշանալով խօսեն, չվիրատրեն որեւէ ձեւով, հեզանք չլինի իրենց ասելիքների մէջ, այլ թող պատրաստեն այս մարտահրաւերին ուղղակիորէն դիմագրաւելու, այս մարտահրաւերները յաղթահարելու եւ մեր յաղթանակների համար: Հեզանքու փոխարէն կոնստիդացել է պետք, համախմբել, եւ որ ամեն մէկը իր տեղում իր որոշակի ընդվրդումը յայտնի կը լինեն խմբեր, թե անհատներ, որպէսզի մեր վերջնական յաղթանակը կնքենք: Չարիքի իշխանութիւնը պետք է հեռանայ»:

«Ինչպէս ամենակարգից էլ ասել ենք մենք, սա ուրացման եւ դատաւանդութեան գործընթաց է, որ այսօրայ իշխանութիւնն իր ղեկավարով փորձում է հասցնել աւարտին: Մեզ մարտահրաւեր է նետուած, եւ մենք պետք է պատասխանենք այդ մարտահրաւերին: Բնականաբար, այն, ինչ մենք ասել ենք բոլոր ժամանակներում, որ այսպիսի պարտադրուած, միակողմանի «ընծումներ» չեն կարող լինել, որ դա անընդունելի է, եւ մենք չենք կարող համակերպուել դրա հետ, մենք մնալու ենք այդ նոյն կէտի վրայ, եւ ուղղակիորէն շարունակելու»:

«Թաթոյեան» հիմնադրամ.

«Սահմանագատման եւ սահմանային անվտանգութեան հարցերով ՀՀ յանձնաժողովը չունի նման հարցեր քննարկելու որեւէ իրաւասութիւն»

«ԱԼԻԲ» - Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգութեան հարցերով ՀՀ յանձնաժողովը, որի անունից ապրիլի 19-ին տարածել է Տաւուշի մարզի հատուածում ադրբեջանական զինուած ծառայողների առաջախաղացման եւ տարածքներ միակողմանի զիջելու մասին յայտարարութիւնը, չունի նման հարցեր քննարկելու որեւէ մէկի իրաւասութիւն: Այս մասին ասուած է «Թաթոյեան» հիմնադրամի տարածած յայտարարութեան մէջ:



թիւն որեւէ տեղ սահմանուած չէ: Ընդամենն առկայ է Հայաստանի կառավարութեան ղեկավարի 23.05.2023 թ. որոշում, որ ուղղակի արձանագրում է նման յանձնաժողով ստեղծուած լինելու փաստը եւ դրա անհատական կազմը:

Չկայ որեւէ իրաւական ամրագրում, թե այդ յանձնաժողովն ինչ իրաւասութիւն ունի, ինչ հարցեր է քննարկում, ինչպէս է քննարկում հարցեր ու որոշումներ կայացնում:

Սա նշանակում է, որ քիչ առաջ այդ յանձնաժողովի անունից կառավարութեան տարածած յայտարարութեան նպատակն է այս քաղաքական բացարձակ անթոյլատրելի գործընթացը ինստիտուցիոնալ-իրաւական կեղծ շղարշով քողարկելը:

Տեղի ունեցածը նաեւ սկզբունքորէն հակասում է սահմանազատման միջազգային պահանջներին:

(Շար. 7-րդ էջում)

Փաշինեանը չի կարող խուսափել պատասխանատուութիւնից՝ Հայաստանին հասցուելիք վնասների համար



«ԱԼԻԲ» - Նիկոլ Փաշինեանը, որքան էլ փորձի թաքնել Միեր Գրիգորեանի կամ այլ պաշտօնեայի յետեւում, միեւնոյն է անհատական, քաղաքական ու իրաւական պատասխանատուութիւն է կրում Տաւուշի մարզին ու ամբողջ Հայաստանին հասցուելիք վնասների համար: Այս մասին «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է «Մայր Հայաստան» շարժման համակարգող Անդրանիկ Թեանեանը:

«Նիկոլ Փաշինեանը՝ Սահմանադրութիւնից ու պետութիւնից դուրս.

1. Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգութեան հարցերով պետական յանձնաժողովի անդամներ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորեանի եւ



Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆայեւի անուններից տարածուած համատեղ յայտարարութիւնը Տաւուշի մարզի հատուածում ի օգուտ Ադրբեջանի տարածքային զիջումների գնալու մասին լեզբուի չէ, քանզի Միեր Գրիգորեանը նման լիազօրութիւններ չունի եւ չի կարող ունենալ:

2. Նիկոլ Փաշինեանը, որքան էլ փորձի թաքնել Միեր Գրիգորեանի կամ այլ պաշտօնեայի յետեւում, միեւնոյն է անհատական, քաղաքական ու իրաւական պատասխանատուութիւն է կրում Տաւուշի մարզին ու ամբողջ Հայաստանին հասցուելիք վնասների համար:

3. Վերջ նշուած յանձնաժողովի տարածած յայտարարութեան համաձայն՝ հայկական կողմը Տաւուշի մար-

զում գնում է միակողմանի զիջումների, թշնամու ուղիղ նշանադրութեան տակ եւ յայտնում մեր գիւղերը, կոմունիկացիաները, տնտեսական ենթակառուցածքները: Հայկական կողմը դրա դիմաց ստանում է... թուրք այն յոյսով, որ Ադրբեջանը գթաւիրտ կը գտնի

4. Սահմանագծում ու սահմանազատումը չպետք է սպառնալիք դառնան մարդկանց հիմնարար իրաւունքների համար, մինչդէռ փաշինեանական իշխանութիւնը հարուածի տակ է դրել ոչ միայն մեր երկրի այդ հատուածի, այլ, նաեւ, ամբողջ Հայաստանի անվտանգութիւնը՝ բաւարարելով Ադրբեջանի պահանջներ եւ Արցախի ճակատագրի կրկնութեան համար բոլոր նախադրեալները ստեղծելով:

5. Նիկոլ Փաշինեանը «մահապարտ» է: Ինքը գիտի, որ եթէ Հայաստանը մնայ, սպա ինքն ի վերջոյ դատուելու է: Դրա համար էլ առաջնորդուում է՝ «Գա՛ւ եւ կը լինեմ իշխանութիւն Հայաստանում, կա՛ւ Հայաստան չի լինի»: Դա նշանակում է, որ մենք էլ պետք է համարժէք պայտիւնարութիւն դրսեւորենք ու հակադրուենք՝ «Գա՛ւ Հայաստանը, կա՛ւ Նիկոլը» կարգախօսով,- գրել է Թեանեանը:



# Մտահոգիչ է, որ դա արևում է յատկապես Ապրիլի 24-ին ընդառաջ

Տանք նաև իրական ձևակերպումը՝ եթե տեղի է ունեցել մարդկանց նոյն ազգային պատկանելության խմբի ոչնչացում, դա կը լինի 1.5 մլն., թե՛ 1500 մարդ ցեղասպանություն է»:

Դոկտոր, պրոֆեսորը որպես օրինակ նշեց, որ սերբերի կողմից Բոսնիայում 7000 տղամարդու ոչնչացումը արձանագրելով, որ կատարվածը ցեղասպանություն է, որովհետև նոյն ազգության, նոյն տեսակի խմբի պատկանող մարդկանց զրկել են կենսից տեսակը ոչնչացնելու նպատակով:

«Դա միաջողակ օրենսդրության համապատասխան կոչում է ցեղասպանություն»,- յատկեցրեց Խաչատուր Ստեփանեանը վստահեցնելով, որ թիւը կապ չունի:

Նրա խօսքով՝ վտանգատուրն այն է, որ փորձում են տեսակետ մտնցնել, որ եթե քիչ լինի, ուրեմն կարելի է կասկածի տակ դնել, առնվազն դարձնում են քննական նիւթ:

2018 թվականից յետո, ինչպես արձանագրել է Խաչատուր Ստեփանեանը, իշխանական պաշտօնակատները աստիճանաբար, քայլ առ քայլ առաջ են բերում բոլոր թուրքական ծրագրային թեզերը: «Փաստինֆո»-ի դիտարկմանը, որ Անդրանիկ Քոչարեանը ԱՄ Դեպարտմենտի ընթացքում մասնաւորեցրել է, որ ուզում է իր հարազատ տատի եւ պապի կողմի անունները հաշտութան տեսնել պատմաբանն արձագանգեց.

«Ուզո՞ւմ է, թո՞ղ ճշտի, իմանայ, բայց դա այսօր, մէկ դար անց դա սարքել օրակարգ, հետևել էլ ասել, որ եթե չենք արել մինչև հիմա՝ թերացել ենք, սպա դրանից օգուտը ունի թուրքերը»:

Ըստ պատմաբանի՝ Օսմանեանի Թուրքիայի չիրականացրած մարդահամարը անելի քան մէկ դար անց մեր կողմից իրականացնելու փորձերն իրականում արդիւնք չեն տալու:

«Եկեղեցին ունի տեսլիկներ, ծխական որոշ հաշտում, բայց եղել է նաև մշակութային ցեղասպանություն, այդ մատենները եւս շատ դժվարեցրել են վերագրել են, ինչպես վերագրել են շատ եկեղեցիներ: Հիմա ի՞նչ, փաստերի ոչնչացումը չհամարեն նրա յանցագործություն: Թուրքերն ի՞նչ են ասում՝ յատկապես վերջին հաշտեցման ֆոնին, ասում են «եկե՛ք պատմաբաններն քննակենք», ուզում են դա պատմաբաններին թողնելու անուն տակ, դուրս բերել քաղաքական, իրական, դիւանագիտական դաշտից: Կան նաև հայեր, որոնք բռնի թուրքացել են, քրդացել են: Հիմա ի՞նչ, դա էլ հաշտեց, թե՛ չհամարենք ցեղասպանություն քայլերից: Չէ, որ մահան սպանակիցով ազգությունը

փոխել տարը, կամ փոքր երեխային գողանալն ու օտար մեծացնելը, էլի ցեղասպանության քայլերից է նրանց ինչպէ՛ս ենք հաշուելու: Գողացած ու բռնի կնոթեան տուած աղջիկների ինչպէ՛ս ենք հաշուելու»,- ասաց Ստեփանեանը ակնացնելով. «Ներողություն 5000 գոն ունե՛ինք, վարչապետը պլիւս-մինուս էր խօսում, 5000 հոգու մէջ յատկ թիւ չունէր: Հիմա անցել է 100 տարի: Անհնար բան, հերթական կեղծ օրակարգն են մտնում շրջանառութեան մէջ՝ մեր հիմնական խնդիրներից շեղելու համար»:

Պատմաբանը մտահոգիչ համարեց, որ դա արում է յատկապես Ապրիլի 24-ին ընդառաջ:

«Անվտանգային խնդիրներ ունենք՝ ներքին անվտանգութեան, արտաքին անվտանգութեան, սոցիալական խընդիրներ ունենք, էլի շեղում են, ընդունում շեղում են կրկին թուրքական օրակարգով»,- նշեց էլ Խաչատուր Ստեփանեանը:

Նա համոզուած է, որ Փաշինեանի կողմից այս օրերին անընդհանուր թեզերի շրջանառութեան մէջ դրւելը, տարբեր լսարաններում դասախօսություններ կարողալը ունեն գործողությունների յատկ տրամաբանություն:

«Կարող է ԱՄ խմբակցությունների ձեռնարկների ժամանակ անգամ իրենց քարտուղարն ասի, որ Փաշինեանը չի հերքում ու չի հերքելու Հայոց Ցեղասպանությունը, ասի, որ իրենց օրօք է ԱՄՆ սենատը ճանաչել: Բայց չէ, որ դա էլ է սուտ: Ինչ իշխանութեան հետ պարզապէս համընկաւ: Իրենց իշխանությունը բացարձակ կապ չունի: Ինչ իշխանութեան են եկել՝ Սփիւքն էլ են պատակել ու Սփիւքում գործող կայ դատի գրասենյակների աշխատակցերը, ԱՄՆ-ի այդ պահի քաղաքականությունը բոլորովին էլ կապ չունի իրենց հետ: Նրանք մեր ինքնութեան հետ կապուած ամէն անգամ նոր թեզ են բերում, դիսկուրս սարքում, իրական Հայաստանը պատմական Հայաստանին հակադրում, Արարատն՝ Արագածի»,- նշել է դոկտոր, պրոֆեսորը նաև քննարկումները համարելով խիստ վտանգատուր:

ՀՀ գործող իշխանությունները փորձում են մոռացութեան մատնել մեր ինքնությունը, բայց Խաչատուր Ստեփանեանը նկատեց, որ եթե անգամ, մենք մոռանանք մեր ինքնությունը, թուրքերը չեն մոռանալու, աղբիւրները չեն մոռանալու:

«Երեւել իրենց երազանքով, արհեստական թեզերով առաջ կը գան, իսկ մենք՝ մոռանալն ու հանգիստ ապրելը երազելով դժար էլ ասլերենք»,- եզրափակեց նա:

# Նիկոլն ասում էր մէկ բան. «Զգիտեմ՝ ինչ անեմ»

Շարադրությունը, լիրիկան, սուտը, մեղադրանքները դնենք մի կողմ. ի վերջոյ պետք է հասկանայ, թե՛ ԱՄ վերջին, յայտնի նիստում ի՞նչ ասաց կամ ի՞նչ էր ուզում ասել Նիկոլը: Պետութեան համար սա է կարևոր: Իսկ Նիկոլն ասում էր մէկ բան. «Զգիտեմ՝ ինչ անեմ»: Այս մասին գրում է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ Վահէ Յովհաննիսեանը:



## «Այնուհանդերձ, ինչ ասաց Նիկոլը»

Շարադրությունը, լիրիկան, սուտը, մեղադրանքները դնենք մի կողմ. ի վերջոյ պետք է հասկանայ, թե՛ ԱՄ վերջին, յայտնի նիստում ի՞նչ ասաց կամ ի՞նչ էր ուզում ասել Նիկոլը: Պետութեան համար սա է կարևոր:

Իսկ Նիկոլն ասում էր մէկ բան. «Զգիտեմ՝ ինչ անեմ»:

Ապրիլի 5-ին «զգեց» Արեւմուտքը, մինչ այդ նա ջարդել էր յարաբերությունները Ռուսաստանի հետ, անէլի վաղ նրան «զգել էր» Թուրքիան, ու Էրդոհանին շնորհատրելու գնալն էլ չօգնեց: Աղբիւրներն էլ նոր պահանջներ է դնում, այսինքն՝ «խաղաղութեան պայմանագրի» թեման էլ ջրեց:

Ու հիմա երկրի գործող ղեկավարը զգիտի՞ ինչ անի: Ողբերգությունն այն է, որ սա իր անձնական պրոբլեմը չէ, այլ մերը՝ Հայաստանինը, մեր ընտանիքներինը:

## Ինչ ասաց ԲԳ-ն

Իրականում մի քանի հոգի են, որ փարաւոնի ստրուկի նման են ընդհանուր սեկտայական մթնոլորտի մէջ: Մնացած 80 տոկոսի մօտ արդէն կասկածի ցեցը մտել է:

## Ինչ ասաց ընդդիմությունը

ԱՄ ընդդիմադիր խմբակցություններն իրենց բաւական արժանապատիւ պահեցին: Ինքս չգիտեմ, թե՛ անէլ ի՞նչ կարելի էր անել յորդառատ ստի, կեղծիքի չղաղարող տարափի տակ: Մարդիկ երեւի, թե՛ արեցին առաւելագոյնը:

## Ինչ հասկացաւ հասարակությունը

Կարծում են՝ քիչ բան: Սա յուշում է՝ մարդկանց պետք է բացատրել, մեկնաբանել, տեղ հասցնել:

## Ինչ է ասում Տաւուշը

Պետք է ճիշտ հասկանանք տառուշեան շարժման ետքինը: Տաւուշեան շարժումը արտաքին դիմադրութեան մասին չէ: Դա ներքին դիմադրութեան շարժում է, որն արդէն դարձել է ասպարեւակցական, համախմբել արժանապատութեան զգացումով, ընդգրծած հեղինակութեամբ մարդկանց:

Սակայն չի կարելի թող տալ, որ Տաւուշը դառնայ երգ ու պարի, նկարահանումների, խրոխտ էլոյթների, իսկ յետոյ յանկարծ մի օր էլ՝ ուղղակի քայքայում թատերաբեմ: Տաւուշը պետական լուրջ ճգնաժամի խնդիր է, որի մէջ անկ ներքաշել է երկրի փաստացի ղեկավարը: Պաշտօնական Երեւանը յայտարարել է, որ այդ գիւղերն Աղբիւրներինն են, եւ Բաքի յաղթաթուրքը հիմա դա է՝ Նիկոլի ասածները, որով եւ սպառնում են Տաւուշի «ըմբոստներին»: Սա լուրջ ճգնաժամ է, քաղաքական խընդիր է, սա քաղաքական լուծում պահանջող խնդիր է: Տաւուշի խնդիրը Հայաստանի խնդիրն է, եւ այդ խնդրի լուծումը Երեւանի կենտրոնում է:

## Ինչ պետք է անի լայն ընդդիմությունը

Երբ երկրի առաջին դեմքն ասում է՝ այլեւս չգիտեմ, թե՛ ինչ պետք է անել, նրա դէմ շատ արագ պետք է ձեւաւորի այլընտրանքային ուժ, որը սեփական հասարակութեանն ասի՝ ինչ պետք է անել: Սա լայն ընդդիմութեան ամենակարեւոր գործն է: Հակառակ դեպքում դառնալու ենք աղէտի սպասող գանգուած, կամ անէլի վատ՝ պասիւ մեղսակից: Որպէսզի Երեւանի փողոցներում հարիւր հազարներով մարդիկ կանգնեն կողքիդ, պետք է մարդկանց ասել, թե՛ ինչ պետք է անել, ինչ է հնարաւոր անել, ինչ ենք ուզում անել, որպէսզի բոլորով, առանց ընտրազանգածային տարբերակման, փրկուենք: Խելամտությունը եւ պատասխանատուությունը պահանջում են արագ ու ռացիոնալ քայլեր, որոնք հնարաւոր է սկսել հէնց հիմա: Քննարկումը պետք է հէնց սրա շուրջ լինի, ոչ թե՛ հնոցիտալ կոչերի: Իմ առաջարկները պատրաստ են առաջիկայում կէտերով ներկայացնել»,- գրել է նա:

## Աշոտ Մելքոնեան.

# «Եթե մենք ազգ ենք ու մեր ազգային ողբերգութիւնը պետք է մոռացուլթեան տանք, ուրեմն՝ սա մի նոր ողբերգութիւն է նշանակում»

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմութեան ինստիտուտի տնօրէն, պատմաբան Աշոտ Մելքոնեանի խօսքով՝ անհնարին է գտնել ու ամբողջացնել Հայոց Ցեղասպանութեանը զոհ գնացած 1.5 միլիոն անմեղ զոհերի անունները, ինչպէս ՀՀ գործող իշխանութիւնն է ասում:

«Առհասարակ հնարաւոր չէ, քանի որ Ցեղասպանութիւնից յետոյ 4-5-րդ սերունդն է հիմա ապրում, գտնել, թարգմանակ պարզել, ուղղակի անհնարին է: Ժամանակին դա հնարաւոր էր՝ Հայոց Ցեղասպանու-

թիւնից անմիջապէս յետոյ, ինչը, օրինակ, արել են Եօհաննէս Լեփպիւտը կամ այլք: Այդ ժամանակ որոշուել է, որ 1915 թվականին խօսքը վերաբերում էր 1 միլիոն 350 հազար նահատակների, իսկ 1916 թվականին ընդհանուր թիւը՝ Դեր Չորում, Ռաբարում է այլ վայրերում, անցել է 1.5 միլիոնից:

Օրինակ, մարդիկ ինչպէս են պատկերացնում՝ պարզել Վանի վիլայեթի կամ Էրզրումի վիլայեթի հարիւրաւոր գիւղերի բնակիչների անունները, երբ գիւղեր կան, որոնք իսպառ վերացել են, եւ որեւէ մէկը ողջ չի մնացել, որ-

պէսզի կարողանալ վիճակագրություն կազմել»,- 168.am-ի հետ զրոյցում ասաց Աշոտ Մելքոնեանը՝ խօսելով ՀՀ իշխանութիւնների յայտարարութիւնների մասին, թե՛ պետք է անուն առ անուն ամբողջացնեն Հայոց Ցեղասպանութեան բոլոր զոհերի անունները:

Աշոտ Մելքոնեանի փոխանցմամբ՝ նոյնիսկ դժարացել են պարզել 1915 թվականի ապրիլի 24-25-ի ձերբակալուած մտաւորականների թաքսանակը:

«Յիշողություններով, մէկի, միւսի պատմելով՝ շրջանառութեան մէջ



էինք որը՛ 600 մտաւորականի տեսլիկներ, որը դարձել էր դասակարգային ճշմարտութիւն: Բայց թուրքական պատմագիտական ընկերութեան նախագահ Բուռնի Հալաչօղլուն թիւիւրապարակեց՝ յղում տալով Թուրքիայի ներքին գործերի նախարարութեանը, որ այդ գիշեր ձերբակալուել

է ոչ թե՛ 600, այլ՝ 2345 հայ մտաւորական եւ ազգային գործիչ: Բնչո՛ւ, ցոյց տալու համար, որ այդքան մարդ նախապատրաստում էին հայերի ապստամբութիւն Օսմանեան կայսրութեան դէմ, դրա համար նրանք ճարահատեալ իբր դիմեցին ձերբակալութեան: Ուրեմն եթե՛ հնարաւոր չի եղել ճշտել մտաւորականների թիւը յիշողութիւններով, թիւը կարող են ճշտել թուրքական արխիւների հիման վրայ, ինչը, բնականաբար, մեզ մատչելի չէ: Մարդիկ ինչպէս են մտածում 1.5 միլիոն մարդու անուն գտնել ու տեղաւորել ցուցակում՝ հականէ-անունէ: Կարծում են՝ սա անհնարին բան է, գուցէ թելադրած է նաև դրսից»,- շեշտեց Աշոտ Մելքոնեանը:

Պատմաբանը չբացատրեց, որ այս ճանապարհով փորձում են միս ու արիւն տալ այն պատմաբանների յանձնաժողովին, որը բազմիցս առաջարկել է Թուրքիայի կողմից, ըստ որի՝ պետք է Հայոց Ցեղասպանութեան (Շար. 6-րդ էջում)



# Իշխան Սաղաթելյան. «Ցեղասպանության ուղղման քաղաքականությունը պետք է արժանանայ լրջագոյն դիմադրության Զայաստանում եւ Սփիւռքում»

«ԱԼԻԷ» - Մրանց ուրացման քաղաքականությունը պետք է արժանանայ լրջագոյն դիմադրության: Բնչպէս հարդրում է News.am-ը այս մասին քաղաքացիների հետ հանդիպման ժամանակ ասել է ՀՀ Զայաստանի ԳՄ ներկայացուցիչ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամատր Իշխան Սաղաթելյանը:

Անդրադարձնելով Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացից Հայաստանի յետքայլի ծրագրին՝ Սաղաթելյանն ասել է. «Մրանց ուրացման քաղաքականությունը պետք է արժանանայ լրջագոյն դիմադրության Հայաստանում եւ Սփիւռքում, այս իմաստով շատ կարեւոր է Ջահերի երթը, այս երթին էլ ակտիվ մեծ թափով պետք է մասնակցել: Մեր ժողովրդի կողմից մերժելի են բոլոր նրանք, ովքեր այդ ճանապարհին կը

կանգնեն»:

**Սահմանազատման եւ սահմանազգծման մասին**  
Անդրադարձնելով սահմանազատման ու սահմանազգծման մասին ԱԺ արտահերթ փակ նիստին՝ Սաղաթելյանը նշել է. «Պարզեց, որ իրականում Հայաստան-Ադրբեջան բանակցություն չկա, դա սուտ է: Չկայ պայմանագիր, խաղաղության պայմանագիր, սահմանազատման ու սահմանազգծման աշխատանք չկա, իրականում կա Ադրբեջանի կողմից Հայաստանին ներկայացված նոր կապիտուլյացիա, որը նրանք պատրաստում են բաւարարել»:

**Սամուղ Վարդանեսի նկատմամբ խոշտանգումները**  
Խօսելով նախօրէին ՔՊ-ական



պատգամատրի հետ վեճի բռնած ու ձեռքարկած Սամուղ Վարդանեսի նկատմամբ գործադրված խոշտանգման փաստին, Իշխան Սաղաթելյանը յայտարարել է, որ դա ՀՀ գործող իշխանությունների կողմից «ձեռնոց է» ժողովրդին:

«Մա լրիւ նոր մասշտաբի ամենաթողություն է այս խուժանների, թուրքահայաստակ խամաճիկերի կողմից մեր ժողովրդի նկատմամբ: Մրանք որ խօսում են ժողովրդավարությունից, անկախ դատական համակարգից, նրանք ընդհանրապէս որեւէ կապ չունեն դրանց հետ: Մրանք պետք է ժողովրդի ուժը, այլ ճանապարհ չկայ: Մրանց այն, ինչ անում են մեր ժողովրդի նկատմամբ թշնամություն է, թշնամու քաղաքականությունն է շարունակությունն է Հայաստանում», - ասել է Իշխան Սաղաթելյանը:

Փաստաբանությունը վճարովի ծառայություն է: Բնչպէս որ վճարովի գրադուներ է լաբբիզմը՝ այլոց շահերի առաջնորդը: Միջազգային փաստաբանությունն ու լաբբիզմը վճարովի են առաւել եւս ու արժեն աստղաբաշխական գումարներ: Այդ ծառայություններից օգտուում են կամ համաշխարհային մասշտաբի մեծահարուստներն ու խոշոր կորպորացիաները, կամ պետությունները՝ իրենց քաղաքական ու տնտեսական շահերը պաշտպանելու, առաջ մղելու համար: Մրանք չոր փաստեր են:

1994 թականից ի վեր Ադրբեջանը միջազգային բոլոր կառույցներում, աշխարհի առաջատար ու ոչ այնքան առաջատար երկրների խորհրդարաններում, քաղաքական, տնտեսական, մշակութային շրջանակներում իր շահերն

սական, քաղաքական, դիւանագիտական միջոցներ:

Մրանք չոր փաստեր են:

Վերը նշած մի քանի փաստերի (որոնք օբիեկտիւ իրականություն են անկախ դրանց նկատմամբ վերաբերմունքից) համադրումից ստացւում է, որ Հայաստանի իշխանությունը՝ Նիկոլ Փաշինեանի գլխավորութեամբ, կատարել է շարունակում է կատարել գործողություններ, որոնք իրականացնելու համար այլ դերակատարների (միջազգային իրատեսքի մասնագէտներ, փաստաբաններ, քաղաքական գործիչներ, լաբբիստներ, եւ այլք) Ադրբեջանն ու Թուրքիան երկար տարիներ վճարել են միլիարդատո դոլարներ:

Ամենապարզ լոգիկով մեթոդով ստացւում է, որ կամ Ադրբեջանն ու Թուրքիան հիմա էլ նոյն գումարները

## Չոր փաստեր՝ Խաւիարային/խիարային դիւանագիտութեան հայ շահառուների մասին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲԵՏԻՍԵԱՆ



առաջ մղելու, Արցախի հարցի վերաբերեալ իր դիրքորոշումները պաշտպանելու համար ծախսել է ամենահամեստ գնահատականներով մի քանի միլիարդ դոլար: Եւրոպական մի քանի երկրներում «խաւիարային դիւանագիտութեան» շրջանակներում բազմաթիւ քրեական գործեր կան յարուցւած ամենատարբեր պաշտօնեաների, քաղաքական ու մեդիա գործիչների մասնակցութեամբ:

Մրանք չոր փաստեր են:

1915 թականին տեղի ունեցած Հայոց Ցեղասպանությունից յետո, յատկապէս անցեալ դարի կէտերից, Թուրքիայի արտաքին քաղաքականութեան գերակայություններից մէկը եղել է մտում է Հայոց Ցեղասպանութեան ժխտումը: Բնչպէս Ադրբեջանը՝ Արցախի հարցի անչլութեամբ, այնպէս էլ Թուրքիան Հայոց Ցեղասպանութեան ժխտողական փաստաթուղթով, տասնամեակներ շարունակ միջազգային բոլոր կառույցներում, աշխարհի բոլոր երկրների քաղաքական, գիտական, իրաւաբանական, տնտեսական, մշակութային եւ այլ շրջանակներում ծախսել է անհաշւելի միջոցներ՝ Հայոց Ցեղասպանությունը հերքելու, դրա միջազգային ճանաչումը թոյլ չտալու համար:

Մրանք չոր փաստեր են:

2022 թականին Պրագայում Նիկոլ Փաշինեանը ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը Արցախը ներառեալ: Շուրջ 30 տարի անց Ադրբեջանը հասել է այն նպատակին, ինչի համար ծախսել է միլիարդատո դոլարներ:

2024 թականին Հայաստանի իշխանութեան պաշտօնական ներկայացուցիչ լոյմ անելով երկրի դեկլարաիւն, յայտարարել է, որ վերջինս նպատակ ունի Ցեղասպանութեան հետ կապւած իրական հիմքեր կառուցել աւելի առարկայական դարձնել գեղասպանութեան ենթարկւած մեր հայրենակիցների ամբողջ ցանկը՝ պարզելու համար՝ արդեօք Հայոց Ցեղասպանութեան գոհերի թիւը եղել է 1.5 միլիոն, որանից պակաս, թէ՛ աւելի: Աւելի քան կէս դար անց Թուրքիան ընդիու պատգամ է այն նպատակի իրականացմանը, որի համար տասնամեակներ շարունակ ծախսել է առեւտրի ֆինանս

վճարում են Հայաստանի իշխանություններին, կամ Հայաստանի իշխանությունները՝ չգիտակցւած կերպով, կատարում են գործողություններ, որոնց համար թշնամական պետությունները պատրաստ են եղել ու պատրաստ են վճարել միլիարդատո դոլարներ: Այլ կերպ ասած՝ փաստերի համադրումից ստացւում է, որ Հայաստանի իշխանությունները կամ օտարերկրեայ վճարող գործակալներ են, կամ անմեղատեսակ ազդեցութեան գործակալներ, որոնք չգիտակցելով՝ անում են այն, ինչի համար Ադրբեջանն ու Թուրքիան պատրաստ են վճարել:

Մյսիքն կամ Հայաստանի իշխանությունները եւս ներգրաււած են «խաւիարային դիւանագիտութեան» շահառուների ցուցակներում եւ վճարում են, կամ նրանց դէպքում կիրառում են «խիարային դիւանագիտությունը», որի շրջանակներում գործում է անմեղատեսակութեան կանխավարկածը, եւ ծառայությունների դիմաց դրանք կատարողները վճար չեն գանձում:

Բացառւած չէ, իհարկէ, որ տեղի ունի ոչ միայն «կամ-կամ», այլ նաեւ «եւ-եւ» պարագան, որովհետեւ անմեղատեսակութեան ուղղակիօրէն չի բացառում վճարելու հնարաւորությունը: Հայ ժողովրդին այսպիսով կանգնած է չափազանց պարզ, բայց միեւնոյն ժամանակ բարդ երկրնորայն առաջ. ընտրել սեփական ճակատագրի մասին որոշումներ կայացնողները լըր-տեսնէ յ են, թէ պայուշներ:

Երկու դէպքում էլ պետութեանը հասցւած եւ հասցւելիք վնասի չափն առանձնապէս չի փոխւելու, այդ ընտրություններից առաւելագոյնը կախւած է լինելու հետագայում նրանք միանգամից են տեղափոխւելու կալանավարներ, թէ՛ այնտեղ են յայտնւելու հասպատակաւոր առողջապահական հիմնարկում գտնւելուց յետո: Իսկ եթէ հայ հասարակութիւնը հրաժարի հիմք ընդունել չոր փաստերը եւ դրանց համարժէք գործողություններ կատարել, ինքը կարող է յայտնւել համապատասխան կոլեկտիւ բուժանաստությունում: Ադրբեջանն ու Թուրքիան հաստատ դէմ չեն լինի ֆինանսատրեղ դրա կառուցումը:

## Հաղորդագրութիւն ԶՅԴ Միջին Արեւելքի Պատանեկան միութիւնների խորհրդատուովին



Ապրիլի 12-ից 14-ը, Թեհրանի մէջ, ՀՀԴ Բ-ի Երիտասարդական գրասենեակին կազմակերպութեամբ գումարեցաւ ՀՀԴ Պատանեկան միություններու պատանիներու յատուկ խորհրդատուովը, որուն կը մասնակցէին Հայաստանի, Արցախի, Թեհրանի, Լոր Ջուղայի, Սիրիոյ եւ Լիբանանի պատանեան միություններէն 23 պատանիներ ու վարիչներ, ՀՀԴ Բ-ի Երիտասարդական խորհուրդէն անդամներ եւ հիւրընկալող շրջանէն ներկայացուցիչներ:

Ենթադէպ խորհրդատուովին պատանիները քննարկեցին ազգային ինքնութեան ու արժեհամակարգի, հայրենասիրական ու ազգային դաստիարակութեան, միութենական կենսի եւ պատանիի տիպարին ու առաքելութեան առնչւած օրակարգեր: Պատանիները իրազեկ դարձան նաեւ անցնող հնգամեակին Արցախի քաղաքական անցուղարձերուն եւ արցախցիներուն հայրենի տուն վերադառնալու անկոտորում կամքին: Պատանիները հաստատեցին, որ Արցախի հարցը փակւած կարելի չէ համարել մինչեւ անոր արդար լուծումը:

Միջին Արեւելքի քաղաքական, ապահովական, հասարակական թէ՛ այլ բազմաբնոյթ կազմութիւններու, իրավիճակներու ու մթնոլորտի մէջ հասունացած պատանիները՝ դրսեւորեցին լրջախոհ կեցածք եւ որպէս դաշնակցական պատանի իրենց կոչումը արդարացուցին:

Մարդու իրաւապաշտպանութեան շըրջագծէն ներս կազմակերպւած այս գործունէությունը հիմնականօրէն կը նպատակադրէր պատանիներու ներկազմակերպական տեղեկություններու, գիտելիքներու ու հմտութիւններու տարածքը ընդարձակել ընդգրկելով՝ (ա) տարածաշրջանի ՀՀԴ Պատանեկան միություններուն վերաբերող կազմակերպական քննարկումներ ու սերտորդություններ, (բ) ծանօթանալ տարածաշրջանի պատանիներու մտահոգություններուն, ազգային ու միութենական հարցերու մտեցումներուն, մտահոգիւրդին եւ հետնակարներուն, (գ) նպատակէ պատանիներու կազմակերպական փորձառութեան ձեռքբերման եւ տարածաշրջանի պատանեկան միություններու ու պատանիներու միջեւ հասարակական յարաբերություններու սերտացման:

Խորհրդատուովը նաեւ կը միտեր խորացնել ՀՀԴ Պատանեկան միությունները մէկ ընտանիքի պատկանելու գաղափարը եւ մեր գաղափարական դաստիարակութիւնը ներթափանցելի դարձնել պատանիներու կրթութեան մէջ, միաժամանակ պատրաստելով ապագայ մարդու իրաւապաշտպանութեան անձնադարան:

Այս օրերուն, մեր ազգին ու հայրենիքին դիմագրաւած դժար պայմաններուն մէջ, խորհրդատուովը պատանիներու ազգային ու հայրենասիրական դաստիարակութեան վերաբերող ծրագիրներ քննարկեց,

կենտրոնանալով նորարար, պատանիները հետաքրքրող եւ միաժամանակ ազգային արժէքները գերազոյն արժէքները համարող ու անոնց դրսեւորումը պատանիներու առօրեային մէջ զգալի դարձնող նախագիծերու վրայ:

Նկատաւելով, որ նմանօրինակ գործունէություններ մեծապէս կը նպաստեն պատանիներու փորձառութեան կրկնապատկման, աշխարհայեացքի ընդլայնման եւ նոր տեսլականներու ձեւաւորման՝ խորհրդատուովը կարեւորեց անոնց յաճախակի կազմակերպումը: Քարոզչական բնագաւառի մէջ ժողովը հաստատեց ՀՀԴ պատանեկան միություններու աշխատանքները լուսարձակի ներքեւ պահելը եւ համացանցի ընձեռած հնարաւորություններէն օգտւելով յարաբերական ու քարոզչական աշխատանք ծաւալելը: Արցախի պատանեկան միութեան գործունէութեան ստատար հանդիսանալու համար խորհրդատուովը սերտեց եւ առաջարկեց տարածաշրջանային թէ՛ համահայկական նախաձեռնություններու տարբերակներ:

Խորհրդատուովի օրակարգերու քննարկման եղանակը, որ կը յատկանշուէր բժախնդրութեամբ եւ խորքայնութեամբ, ցուցանիչ էր, որ Միջին Արեւելքի ՀՀԴ Պատանեկան միությունները տասնամեակներու ընթացքին իրենց ծաւալած գործունէութեամբ՝ իրենց հիմնադրութեան թիրախը նաճած են:

Խորհրդատուովը հիւրընկալող Թեհրանի կազմակերպական շրջանը իր ցուցաբերած ջերմ մտեցումով ու ընդունելութեան հարազատութեամբ վերահաստատեց Դաշնակցութեան աշխարհասփիւռ կառույցներու միահամառութիւնը:

Յառաջիկայ ամիսներուն պիտի կազմակերպուի Եւրոպայի եւ Ամերիկաներու պատանեկան միություններու նմանաբնոյթ խորհրդատուովներ:

ՀՅԴ Բ-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ



# Նեարդակենսաբանները գլխուղեղում վախի զգացումն «անջատելու» միջոց են յայտնաբերել



Սան Դիեգոյի Գալիֆորնիայի համալսարանի նեարդակենսաբանները յայտնաբերել են գլխուղեղում մի մեխանիզմ, որը պատասխանատու է տհաճ իրադարձություններից յետոյ սաստիկ վախի զգացողության առաջացման համար: Հետազոտության արդյունքները հրատարակվել են Science գիտական ամսագրում:

Գիտափորձերն անցկացվել են գենետիկորեն ձեռնարկված մկների վրա: Գիտնականները նրանց որոշակի պայմաններում տարբեր հզորությամբ էլեկտրական հոսանքի ազդեցության են ենթարկել ու նկատել, որ երկու շաբաթ անց նոյն պայմաններում յայտնվելու պարագայում կրծողները սարսափից քարանուս են: Չափազանց հզոր շոկի ենթարկված կրծողները սարսափից քարանուս էին նաև այլ պայմաններում՝ ցուցաբերելով ընդհանրացված արձագանգ:

Կենդանիների գլխուղեղի հետազոտության արդյունքում գիտնականները պարզել են ինչն է դարձել նման արձագանգի պատճառ: Մասնատրամպլա, նրանք ուսումնասիրել են կաթնասունների գլխուղեղի այն հատվածը, որը պատասխանատու է տրամադրության ու


տագնապի ձեռնարկման համար, ինչպես նաև ապահովում է սերոտոնինի զգալի քանակության մատակարարումը առաջնային ուղեղ:

Նրանք պարզել են, որ լուրջ վախը փոխում է ներքինադրոնի մեխանիզմը գլխուղեղում, որը գրգռում է ներքինները, գամմա-ամինաթթուի արտադրությունը, որը ձևավորում է ներքինների ակտիվությունը:

Գիտնականներին յաջողվել է ձևակերպել մկների վախն աղետակախեղ վիրուսի ներարկման շնորհիվ, որն անջատում է գամմա-ամինաթթուի արտադրությունը և համար պատասխանատու գեներ:

Բացի այդ, նեարդակենսաբանները նաև սաստիկ վախի հետեւանքները մեղմելու միջոց են գտել տհաճ դեպքից անմիջապես յետոյ մկների տարբեր ֆունկցիոնալ հասարակ հակադեպրեսանտը, որը խանգարում է ներքինների ակտիվությունը: Մակայն խնդիրն այն է, որ դեղամիջոցը հարկավոր է ընդունել տրամադրության միջոցով: Անմիջապես յետոյ, քանի որ ուշացման դեպքում այն արդեն անարդյունավետ է դառնում:

# Ստեղծել է դիաբետիկների վերահսկման բջջային յալենլաձ, որը կօգնի կանխել դիաբետիկ խոցերի առաջացումը



Հետազոտողների խումբը՝ Մինգապուրի Նանեանի տեխնոլոգիական համալսարանի (NTU Singapore) ղեկավարությամբ, ստեղծել է բջջային յալենլաձ դիաբետիկ մարդկանց և նրանց ուսումնասիրելու համար, ովքեր խնամում են նրանց, հետեւում դեղերի ընդունմանը, ֆիզիկական ակտիվությանը և դիետային,- գրել է Medical Xpress-ը:

WellFeet յալենլաձը մշակվել է Թան Թոկ Մենգ հիւանդանոցի և Առողջապահության ազգային խմբի բժիշկների մասնակցությամբ: Այն նպատակ ունի օգնել դիաբետիկ բարդացումը՝ ուսումնասիրելու դիաբետիկ խոցերը կանխելուն, որոնք հանդիպում են այդ հիւանդությանը տառապող մարդկանց մեկերորդի (34 տոկոս) մաս: Մինգապուրում իրաքանչիւր տասներկուերորդ բնակիչը (8,5 տոկոս) կամ 32000 մարդ տառապում է դիաբետով: Դիաբետով տառապող մարդիկ աւելի շատ

են հակված ուշ լուրացող վերքեր ունենալուն ոտքերի վրա: Եթե նրանց չհետեւեն և չբուժեն, ոտքերի դիաբետիկ խոցերը կարող են յանձնեցնել ստորին վերջույթների անդամահատման և մահուան բարձր ռիսկի: Ռեցիդիվների բարձր յաճախակիությունը յանձնեցնում է այն բանին, որ ուսումնասիրվող խոցերը յաճախ դառնում են ֆինանսական բեռ պացիենտների համար՝ դեղերի և վիրահատության ծախսերի պատճառով, սառնում են հետազոտողները:

Յալենլաձը թեստավորվել է պացիենտների և նրանց խնամողների 40 զույգի վրա Tan Tock Seng հիւանդանոցից և մանրակրկիտ գնահատվել է որակական և քանակական հետազոտության ընթացքում: Յալենլաձն օգտագործելուց մեկ ամիս յետոյ հետազոտության մասնակիցները նշել են ոտքերի խնամքի և ինքնասպասարկման կարգի դրական փոփոխություններ դիաբետի դեպքում:

# Գիտնականները ներկայացրել են պարզ միջոցներ գլխուղեղի կաթնաթթվի կանխարգելման համար



Չինաստանի Հանչոուի մանկավարժական համալսարանի գիտնականները պարզել են, որ ինտենսիվ ֆիզիկական ակտիվությունը (ներառելով ակտիվ տնային աշխատանքը) և հետադարձ զարգացումը ժամանակակի սահմանափակումը զգալիորեն նվազեցնում են գլխուղեղի կաթնաթթվի հալանակառուցումը: Հետազոտության արդյունքները հրատարակվել են Stroke ամսագրում:

Հետազոտությանը մասնակցել է 386,902 կամավոր, որոնք նախկինում երբեք գլխուղեղի կաթնաթթվի չեն տարել: Մասնակիցները գիտնականներին տեղեկատվություն են տրամադրել իրենց առողջության և առօրյա գործունեության մասին՝ ներառելով վարժությունները, աշխատանքային կեանքը, տնային գործերը, քնի տեղադրությունն ու հետադարձ զարգացումը: Տեղեկատվության հաւաքագրումից յետոյ գիտնականները շուրջ ութ տարի հետեւել են կամավորների վիճակին:

Հետազոտության ընթացքում կամավորների շրջանում գրանցվել է իշեմիկ ինսուլտի, հեմորագիկ ինսուլտի և ենթատառայնային արիւնազեղման 6983 դեպք: Գործունեի համակցված վերլուծությունը ցույց է տվել, որ ֆիզիկական ակտիվության դեպքում գլխուղեղի կաթնաթթվի վտանգը 17%-ով ցածր է լինում:

Այս յարաբերակցությունն առաւել յստակ է նկատվել այն մասնակիցների մօտ, որոնք կանոնադր և ակտիվորեն կատարում էին տնային գործերը և ունեին աւելի շատ քայլերու սովորություն: Նշում է, որ աշխատատար տնային գործերը ներառում են յստակ մաքրելը, ապակիները մաքրելը, ինչպես նաև մեքենան ինքնուրույն լւանալը:

Գիտնականները նաև պարզել են, որ չափից շատ քնելը, մեքենաներից և հասարակական տրանսպորտից յաճախակի օգտուելն ու երկար ժամանակ հեռուստացոյց դիտելը 43%-ով բարձրացնում են գլխուղեղի կաթնաթթվի հալանակառուցումը:

# Քրոնիկ ստրեսը նպաստում է քաղցկեղի մետաստազիզացմանը



տոր մկների խմբին ենթարկել են յստակ պայմանների քրոնիկական ստրեսի նմանակման համար: Այնուհետև գիտնականները արեան նմուշներ են վերցրել կրծողներից՝ գնահատելու նրանց մարմնում տեղի ունեցող նիւթափոխանակության փոփոխությունները: Թեստերը ցույց են տվել, որ ստրեսի ժամանակ արեան սպիտակ բջիջները, որոնք կոչվում են նեյտրոֆիլներ, սկսում են միատրել և ձեւափոխվել կապտու, ցանցանման կառուցվածքներ:

Գիտնականները պարզել են, որ հիւսուածքներում նման կառուցվածքի առաջացումը նրանց խոցելի է դարձնում քաղցկեղի մետաստազների նկատմամբ: Այդ մասին վկայում էր քաղցկեղի բջիջների տեղափոխումը կրծքաանոթային հաստածից դեպի կրծողների թոքերը:

Նշում է, որ նեյտրոֆիլների կողմից ստեղծված ցանցանման կառուցվածքը կոչվում են ցանցեր կամ նեյտրոֆիլ բջիջների արտաբջջային թակարդներ: Նրանք հանդէս են գալիս որպէս մի տեսակ ցանց ներխուժող պաթոզեն միկրոօրգանիզմների «բնակարան» համար: Մակայն քաղցկեղի դեպքում նման ցանցերը մետաստազների համար բարենպաստ միջավայր են ստեղծում:

Գիտնականները ենթադրել են, որ նոր դեղամիջոցների մշակումը, որոնք ուղղված են նեյտրոֆիլ բջիջների թակարդներին, կարող են բարելավել քաղցկեղի բուժման արդիւնաւտութիւնը, երբ հիւանդութիւնը չի սկսել մետաստազներ տալ:

NEWS.am Medicine

## «Եթե...» (Շար. 3-րդ էջից)

հարցով զբաղվի պատմաբանների խումբը, ինչը Հայաստանը մշտապես մերժել է:

Ինչ վերաբերում է իշխանական պատգամատր Անդրանիկ Քոչարեանի յայտարարությանը՝ եթե հրեաները կարողացել են շուրջկոստի գոհերի անուններն ամբողջացնել, ապա ինչու է Հայաստանը չի կարող, Աշոտ Մելքոնեանն ասաց՝ թող մարդիկ լաւ իմանան, որ հրեաներն այդ գործընթացը սկսել են, սակայն այդպէս էլ չեն կարողացել ընդհանուր յայտարարի գալ, քանի որ մարդիկ կան, որոնք անհետ կորել են, նրանց մասին տեղեկություններ չեն եղել:

Հարցին՝ հնարատր է՞ չէ իշխանութիւնն այս քայլով ցանկանում է Հայոց պատմութեան էջերից իսպառ ջնջել Հայոց Յեղապայանութեան վերաբերեալ էջը, Աշոտ Մել-

քոնեանը պատասխանեց.

«Եթե մենք ազգ ենք ու մեր ազգային ողբերգությունը պետք է մոռացության տանք, ուրեմն սա մի նոր ողբերգություն է նշանակում, որը, կարծում եմ՝ հայ ժողովուրդը թող չի տայ: Մա ամենազգայուն խնդիրն է, թող մարդիկ չհամարձակվեն մեր ազգային ողբերգության վրայ եւս ձեռք բարձրացնել, սա անհնարին բան է: Կայ Սփիւրք, կայ հայ բնակչութիւն, որը յստակ գիտի, թէ ինչ է տեղի ունեցել 1915 թականին, առհասարակ Առաջին աշխարհամարտի տարիներին և սկսած դեռեւս 1890-ական թականներից, երբ 30 տարի ցեղասպան քաղաքականութեան արդիւնքում հայ ժողովուրդը գրկել է իր պատմական հայրենիքից: Այսինքն՝ նա ոչ միայն ֆիզիկապէս բնաջնջել է, այլև գրկել է սեփական հայրենիքից, այս իմաստով մեր ողբերգութիւնը շատ աւելի խորն ու զգայուն է», - եզրափակեց Աշոտ Մելքոնեանը:



